ԱՆՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱԼԼՈՎԸ ԵՎ ԲԵՆԵՖԻՑԻԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Հասարակական-տնտեսական ցանկացած հարաբերություններում կարևորվում է արտադրական միջոցների վրա հիմնված հողի սեփականության ձևը: Խոսելով ֆեոդալական սեփականության մասին՝ կարևոր է նշել, որ ֆեոդալիզմի դարաշրջանում սեփականության հիմնական ձևը հողային սեփականությունն է: Հենց տնտեսական կառույցն է որոշում զարգացման ուղղությունը, իսկ քաղաքականությունը հանդիսանում է գոյություն ունեցող տնտեսական կյանքի արտացոլումը[1]: Ալլոդ տերմինը առաջացել է allod գերմաներեն բառից (al-լրիվ, od-տիրույթ): Այս հասկացությունը ի հայտ է եկել միջին դարերի սկզբին: Գերմանական ցեղերի մոտ այն փոխարինել է սեփականության համայնական ձևին և տարածվել Արևմտյան Հռոմեական կայսրությունում առաջացած «բարբարոսական» պետությունում: Վաղ միջնադարյան Եվրոպայում ալլոդը ժառանգման սահմանափակ իրավունքով շարժական և անշարժ ունեցվածք էր, հետագայում դարձավ ֆեոդալական պարտությթից ազատ հողային սեփականություն: Լինելով ինքնուրույն զավթողական արշավանքներով ձեռք բերված մասնավոր սեփականություն՝ ալլոդը անկախ էր ցեղից և պետությունից, և ալլոդի տերը ոչ մի աշխատանք չէր կատարում դրա դիմաց: Ալլոդի սեփականատիրոջ հարաբերությունը ցեղի և պետության հետ հիմնված էր բարոյական սկզբունքների վրա, որը արտահայտվում էր փոխօգնության միջոցով, ընդ որում այդ օգնությունը դուքսին կամ կայսրին կախված էր ալլոդատիրոջ ցանկությունից, իսկ հարկեր գանձելը չէր կարող համարվել անհավատարմություն: Ալլոդը որպես ընտանիքի բացարձակ սեփականություն պատկանում էր ընտանիքի ավագին և չէր կարող ժառանգություն թողնվել ուրիշին: Ալլոդի հսկայական տարածքները տրվում էին հողի կարիք ունեցող անձանց, որոնք կախման մեջ էին ընկնում ալլոդի տիրոջից: Բացի դրանից, փոքր ալլոդատերը ժամանակի ընթացքում դառնում էր անհամեմատ հզոր, օգնություն էր խնդրում ավելի հզորից, նրան համարում իր հովանավորը և ընկնում կախման մեջ: Այսպիսով, ալլոդային հարաբերությունը քիչ-քիչ վերածվում էր բենեֆիցիայի[2]: Ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց մանր ալլոդատերերի հողաբաժիններն անցան ֆեոդալական խոշոր տնտեսություններին: Միաժամանակ խոշոր և միջին հողատերերի ալլոդները աստիճանաբար տեղի տվեցին պայմանական ֆեոդալական սեփա-

[1] Маркарян С. А. Сельджуки и Иранс 11 века, 1991, Саратов, с 29-32
[2] Энциклопедический словарь, под ред. И.. Е. Андреевскаго, т 1, с 466

կանությանը՝ բենեֆիցիային, ապա՝ ֆեոդին: Սակայն ալլոդային սեփականությունը ինչ-որ չափով պահպանվեց Անգլիայում, Իտալիայում, Իսպանիայում,Գերմանիայում և հատկապես հարավային Ֆրանսիայում ու Սկանդինավիայում: Մերձավոր և Միջին Արևելքում ալլոդին համապատասխանում էր մուլքը, ռուսական պետության մեջ՝ վոտչինան, Հայաստանում՝ «հայրենիքը»:

Բենեֆիցիա տերմինը առաջացել է լատիներեն beneficium (բարեգործություն) բառից: Հին Հռոմում դա որևէ արտոնություն էր, որը կայսերական ժամանակաշրջանում տրվում էր հարկատուներին: Վաղ միջնադարյան Արևմտյան Եվրոպայում բենեֆիցիան գլխավորապես հողի պայմանական և ժամանակավոր շնորհումն էր թագավորի կամ ֆեոդալ-սենյորի կողմից զինվորական կամ վարչական ծառայության դիմաց: Ֆրանկների պետության մեջ բենեֆիցիան լայնորեն կիրառվել է Կարլոս Մարտելի՝ բենեֆիցիայի վերաբերյալ բարեփոխումից հետո (8-րդ դարի 30- ական թթ)[3]: Դրանից հետո հողը և մշակող գյուղացին ցմահ տրվել են բենեֆիցիարին (հիմնականում զինվորական ծառայության դիմաց): Դրանով ուժեղանում է գյուղացիների կախումը ֆեոդալից: Ժամանակի ընթացքում ցմահ տրվող բենեֆիցիան դառնում է ժառանգական սեփականություն՝ ֆեոդ: Հայկական աղբյուրներից երևում է, որ ֆեոդալիզմի դարաշրջանում եղել է մի ձև, որը շատ նման էր Արևմտյան Եվրոպայի բենեֆիցիային: Վաղ ֆեոդալիզմի շրջանում այն կոչվել է պարգևական, զարգացած ֆեոդալիզմի շրջանում նաև՝ արքայատուր: Պարգևական և արքայատուր հողերը որպես պարգև տրվել են ֆեոդալներին՝ աչքի ընկնող ռազմական և վարչական ծառայության համար: Ինչ վերաբերում է կաթոլիկ եկեղեցուն, ապա այստեղ բենեֆիցիա է կոչվել հոգևորականի պարգևատրումը որևէ եկամտաբեր պաշտոնով: Սահմեդական իրավունքը հողի ժամանակավոր հանձնումը չէր համարում հողի սեփականության հատուկ կատեգորիա: Չնայած որոշ այդպիսի հողերը կոչվում էին պետական: Սակայն այստեղ մենք գործ ունենք իրավաբանական խաբկանքի հետ: Հողերի պայմանական հանձնումը, հատկապես այն բանից հետո, երբ դրանք դարձան ժառանգական, ֆեոդալական հողային հարաբերությունների հատուկ դասի հիմք դրվեց, և մենք պարտավոր ենք դրանք ուսումնասիրել հենց այդ սկզբունքով:

Պետական և պայմանական բենեֆիցիայի միջև տարբերությունը այն է, որ առաջինի դեպքում պետությունը հանդիսանում է նրա միակ սեփականատերը և ուղղակիորեն իր ֆինանսական վարչակազմի միջոցով շահագործում էր հողատերերին՝ գյուղացիներին, իսկ երկրորդի դեպքում պետությունը հարկերի գանձման և մնացած բոլոր իրավունքները տալիս էր հողատերերին: Պետք է նշել, որ պետական հողեր ասելով, մենք հասկանում ենք միայն դիվանին պատկանող հողերը (դիվան-ե խաս): Բենեֆիցիային հետագայում տրվեց

[3] Энциклопедический словарь, под ред. И. Е. Андреевского, т. III, с 435

դուրանական ծագում ունեցող իկթա անվանումը: Ինչպես գիտենք՝ իկթա արաբական տերմինը առաջացել է Ղուրան արմատից: Մահմեդական աստվածաբանները հակված էին բոլոր նոր հարաբերությունները, որոնք առաջանում էին խալիֆայությունում արաբական արշավանքներից հետո, համաձայնեցնել Ղուրանին և հադիսներին: Ղուրանում նույնպես հիշատակվում է հողերի պարգևատման մասին, սակայն ինչպես նշում են արտասահմանյան հետազոտողներ Ա. Պալակը և Ֆ. Լոկեգորդը, Ղուրանում խոսք է գնում փոքրիկ հողակտորների պարգևատրման մասին և այստեղ դեռ չի նշվում ֆեոդալական տիպի սեփականության մասին: 8-9-դ դարերում մահմեդական օրենսդիրները նշում են իկթայի մի քանի տարատեսակներ, սակայն դրանցից միայն մեկն է նշանակում հողի հանձնում և դա իկթա մամլիքն է: Իկթայի մյուս տարատեսակները՝ իկթա իջարեն, իկթա էսթիղլալը և մյուսները, նշանակում էին հողից եկած եկամուտների ծախսման իրավունք, այսինքն օգտվել ռենտայից: Փաստորեն, իկթան խալիֆայության ժամանակ ինքնատիպ բենեֆիցիա էր, որը շատ քիչ էր նման հետագայի իկթա-ավատին[4]:

Արտասահմանյան հեղինակներից Կ. Բեկերը իկթայի տիրոջը՝ մուկթային, համարում է միջնորդ պետության և գյուղացու միջև: Ակնհայտ է, որ Բեկերը չի հասկացել իկթայի բնույթը, քանի որ փաստերին նայում էր մահմեդական օրենսդիրների աչքերով, այլ կերպ ասած, նա իրավաբանական դասակարգումներում չի տեսել պատմական իրականությունը: Իկթայի տարածումը և վերածումը ֆեոդալիզմի դարաշրջանի հողային սեփականության հիմնական ձևի Ա. Յու. Յակուբովսկին և Բ. Ն. Զախոդերը կապում էին Միջին Ասիայում թյուրք ղարախանյանների, իսկ Առաջավոր Ասիայում սելջուկների զավթողական արշավանքների հետ: Իսկ Վ.Ա. Գորդլևսկին, Յակուբովսկուց և Զախոդերից առաջ անցնելով, նշում է, որ ռազմա-ավատական համակարգի արմատները գնում են Արևելյան Ասիա:

Ե՞րբ է Իրանում իկթան բենեֆիցիայից վերածվել ժառանգական ավատի: Յակուբովսկին գտնում է, որ իկթան հիմնական հողային սեփականություն վերածելու ֆեոդալների ձգտումները ի հայտ են գալիս 11-դ դարում: Զախոդերը գտնում է, որ արդեն 11-դ դարում սելջուկների ժամանակ իկթան վերածվել էր ռազմական ավատի: Պետրուշևսկին, հիմք ընդունելով Նիզամ օլ-Մուլքի «Սիասաթ-նամեն», կարծում է, որ սելջուկների օրոք իկթայի տերը միայն իրավունք ուներ գյուղացիներից հարկեր հավաքել, այլ ոչ թե դրանք ղեկավարեր և միայն մոնղոլների ժամանակ իկթան զարգացավ և դարձավ ժառանգական ավատ[5]: Ակնհայտ է, որ Նիզամ օլ-Մուլքի տեսակետը չի կարող հիմնարար աղբյուր լինել այս հարցին լուծում տալու համար: Ավելի ուշ շրջանի

---

[4] А.А.Ализаде К вопросу об институте „икта" Известия „АзфАН", Баку1942, N 5, с 20-27

[5] Низам ал-Мулк Сиасет-намэ Изд. Захолера Б Н., Москва, 1949г, с 204

իր աշխատություններում Պետրուշևսկին միանում է Զախոդերի և Յակուբովսկու կարծիքին, ըստ որի՝ արդեն 11-րդ դարում իկթան, եթե ոչ տեսականորեն, գոնե պրակտիկայում վերածվել էր ռազմական ավատի[6]:

Նշելով,որ խալիֆայության առաջացման ժամանակ իկթան դեռևս չի ունեցել ֆեոդալական բնույթ, ֆրանսիացի պատմաբան և հոգեբան Կլոդ Կաենը կարծում է, որ իկթան դառնում է ավատ (ֆեոդ) 9-10-րդ դարերում և աստիճանաբար ձեռք բերում ֆեոդալական բնույթ: Շարունակելով միտքը՝ Կ. Կաենը նշում է, որ իկթան որպես ֆեոդ զարգանում է Բույյանների ժամանակ, ընդ որում հենց այս համակարգն էլ ընդունվեց սելջուկների կողմից, որը, իհարկե, նրանք փոփոխությունների ենթարկեցին[7]: Իկթան վաղ սելջուկյան շրջանում պայմանական հիմունքներով էր տրվում: Աղբյուրների համաձայն դա ժառանգական սեփականություն չէր և կարող էր հետ վերցվել սուլթանի կողմից: Հայտնի է, որ Տուղրիլ-բեկը կոնֆլիկտի արդյունքում հրամայեց խլել իկթան Բաղդադի խալիֆից:Դրա հետ մեկտեղ վկայություն կա, որ սուլթանը հրամայել է Ալ- Կահիմն իր ծառայողներին իկթա հատկացնել Իրաքում: Այս բոլորը հաստատում են այն միտքը, որ սկզբնական շրջանում իկթան պայմանական էր և շատ մոտ իկթա ալ-աստիղալ տեսակին: Այսպիսով, սելջուկների ժամանակաշրջանը կարևոր դեր է կատարել իկթայի էվոլյուցիայի մեջ: Ինչպես երևում է, Իրանում 11-րդ դարում հողի սեփականության ամենատարածված ձևն էր: Սակայն ժառանգական սեփականության վերածվելու իկթայի միտումները նկատվում են 10-րդ դարում: Մոնղոլների ժամանակաշրջանի իկթան 10-12-րդ դարերի իկթայից տարբերվում է նրանով, որ ժառանգաբար անցնելը և իկթադարի իրավունքները, որոնք գոյություն ունեին պրակտիկայում այժմ իրավաբանորեն ճանաչվում էին Ղազան խանի հրամաններում:

Ճիշտ է՝ մոնղոլների առաջին խաների ժամանակաշրջանում կար իկթայի տրամադրում, սակայն դրանք տրվում էին ոչ բոլոր ծառայողներին, այլ միայն բարձրաստիճան պաշտոնյաներին: Ղազան խանի 1303թ. հրամանով իկթա էր տրամադրվում բոլոր ծառայողներին: Չնայած դա ողորմություն էր խանի կողմից, սակայն իրականում 1303թ.ի հրամանը զինվորականների կողմից պահանջ էր: Այս վարկածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ դա դեմ էր խանի կենտրոնացման քաղաքականությանը և խթանում էր ֆեոդալների անջատողական քաղաքականությանը: Ինչպես հայտնի է, հողի հետ միասին ստանում էին նաև հագուստ ու մթերք և դա անվանվում էր ջամեգի (հագուստ) պարսկական տերմինով: Այս տերմինը հայտնի էր մինչև մոնղոլների արշավանքները: Նիզամ օլ-Մուլքը հայտնում է, որ Մահմուդ Ղազնևիի օրոք (998-1030թթ.) Խորեզմի դրածո Ալթունթաշի ջամեգին հասնում էր 120000 դինարի:

---

[6] Петрушевский И.П. Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV вв, с 256-258

[7] Cahen Cl. L'e volution de l' iqta du IX-XIII sie cle, page 27

Բացի այդ, Ա.Ա. Ալի-զադեն իկթային վերաբերող իր հատուկ աշխատության մեջ խոսելով իլխանների շրջանի իկթայի մասին՝ նշում է, որ այժմ իկթայի տակ հասկանում են ոչ միայն հողերը, այլև մարդկանց[8]:

Սոյուրղալը իկթայի հետագա զարգացումն է և իկթայի համեմատությամբ նրա հիմնական իրավաբանական առանձնահատկությունը վարչա-իրավաբանական անձեռնմխելիությունն է: Սոյուրղալ բառացի նշանակում է պարգևատրում, իհարկե, հողի պարգևատրման իմաստով: Դրա պատմական նշանակությունը հասկանալու համար կարևոր է այն կարծիքը, որ ֆեոդալական հասարակության մեջ ֆեոդալի բարձրագույն իշխանությունը դատական և ռազմական գործում հողի սեփականության ցուցիչն էր: Անձեռնմխելիության իրավունքի ընդլայնումը կապված էր ֆեոդալական սեփականության զարգացման հետ: Սակայն այդ իրավունքի աղբյուրը պետական իշխանության կողմից տրված պարգևատրումը չէր, ինչպես որ նշում են արտասահմանյան մի քանի հեղինակներ (օրինակ Կ. Բեկերը): Ղեկավարի կողմից հողատիրոջը տրված անձեռնմխելիության իրավունքը ֆեոդալական սեփականության զարգացման գործընթացի իրանաբանական արտահայտությունն էր և բացարձակ անձեռնմխելիությունը կապված է սոյուրղալ համակարգի հետ: Այս համակարգը 14-րդ դարում գոյություն ուներ Իրանում և դրա առաջացումը կապել Լենկ-Թեմուրի արշավանքների հետ, ինչպես անում են խորհրդային շրջանի հեղինակները, սխալ է[9]: Սոյուրղալը ժամանակի ընթացքում զարգանում է և դառնում գերիշխող հողային հարաբերություն: Զախոդերը նշում է, որ խոշոր սոյուրղալի մեջ կային ոչ միայն հողագործական շրջաններ, այլ նաև քոչվորական տափաստաններ:

Այսպիսով, ֆեոդալիզմի դարաշրջանում հողային հարաբերությունները մեծ դեր են կատարել և, եթե ուշադրություն դարձնենք, ապա ակնհայտորեն պարզ կդառնա, որ ֆեոդալիզմի զարգացումը մեծամասամբ կապված է հողային հարաբերության զարգացման փուլերի հետ: Ուսումնասիրելով ալլոդը, բենեֆիցիան, իկթան և սոյուրղալը՝ պարզ է դառնում մեկ փաստ՝ դրանք հողի միևնույն հարաբերություններն են ֆեոդալիզմի զարգացման տարբեր փուլերում:

---

[8] Петрушевский И.П. К вопросу о прикреплении крестьян к земли в Иране в эпоху Монгольского владычества, 1947г, N 4, с 124

[9] Петрушевский И.П. К истории института сойургала, Советское востоковедение,т VI, М.-Л., 1949, с 39